

Եթե հոս վարպետորդի մէկը գտնուի՝ ամբողջ թաղն մատի վրայ կ'առնէ եւ ամիսներով ու տարիներով կ'խաղցունէ:

Թաղեցիներն այն աստիճան վախկոտ են, որ եթե քիչ մը բարձր ձայն հանես՝ ամենքն ալ կզարհուրին եւ կ'փախչին:

Այստեղ ընկերական կեանք չկայ. իրենց ամենէն գլխաւոր զբօսանքն է զբօսարանի մը մէջ մտնել եւ *իքի եհւզ* խաղալ:

Իգական սեռն ոչ գործ ունի եւ ոչ արհեստ. իր կեանքը քնանալով կամ պատուհաններու առջեւ նստելով կ'անցունէ: Պարոններէն եւ օրիորդներէն ոմանք գիշերները փողոցները կը շրջին եւ անմեղ սիրահարութիւններով ժամանակ կ'անցունեն:

Այս թաղին մէջ կրնակի Փանոսեան, խմբագիր *Մանգումէի*, բայց չգիտցուիր, թէ թաղին վարժարանին վրայ ինչո՞ւ հոգ չտանիր: Հոս կրնակին նաեւ քանի մը բժիշկներ, որոնցմէ մին անցեալները մինչեւ որ ստակը չառաւ՝ տունէն դուրս չելաւ աղքատ հիւանդի մը երթալու համար: Հարուստներն ալ պարտաւոր են հոս նախ բժիշկին այցելութեան գինը դրկել եւ ապա աղաչել բժիշկն, որ բարեհաճի գալ եւ իրենց հիւանդն... մեռցունել: Այն ստեն բժիշկը վազելով կ'երթայ:

Հոս է Վարդովեանի թատրոնը, որ ձմեռուան եղանակին մէջ ներկայացումներ տալով ժողովուրդը կկրթէ: Քանի մը ատենէ ի վեր հայերէն ներկայացումներն արգիլուած ըլլալով Բ. Դրան կողմէ՝ միայն տաճկերէն լեզուով ներկայացումներ կտրուին: Թաղեցին ալ վախէն հայերէն չխօսիր, որ Բ. Դոնէն դիտողութիւն մը չըլլըուի իրեն:

Այս թատրոնէն օգուտ քաղելով քանի մը խաբեբաներ՝ չորս կանգուն երկայնութեամբ եւ մէկ ու կէս կանգուն լայնութեամբ յայտարարութիւններ կհրատարակեն, *փառաւոր ներկայացում*, *սքանչելի ներկայացում*, *խիստ շքեղ ներկայացում*, *արտաքոյ կարգի ներկայացում*, *ներքոյ կարգի ներկայացում* եւ այլն ըսելով խեղճ ժողովրդեան քթէն կրճնեն եւ անճոռնի ներկայացումներ տալով ժողովրդեան քսակը կպարպեն: Հոս թատրոնի դոնապանն հեղինակ կ'ըլլայ եւ ողբերգութիւն մը կգրէ՝ եթէ առաւօտ մը քսակին մէջ ստակ չգտնէ: Թատրոնի տեսարանին վրայ փառաւոր ներկայացումներ տրուած են շնորհիւ Վարդովեանի անդու աշխատութեանը, բայց տեսարանէն դուրս օթեակներու մէջ ալ ներկայացումները պակաս չեն եղած: Քիչեր են, որ թատրոն կ'երթան՝ ներկայացուած խաղը տեսնելու համար. շատերը օթեակներու մէջ կնային՝ իրենց փնտռած անձերը գտնելու համար: